Հավելված N 3
ՀՀ կառավարության 2006 թվականի
նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

Ձև

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	*Ջերմուկ համայնքում հասարակական շենքերի կառուցում/վերանորոգում*
Մարզ	*Վայոց ձոր*
Համայնքը /համայնքները	*Ջերմուկ համայնք /ք. Ջերմուկ, գ. Կեչուտ և գ. Գնդեվազ/*
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	*Մայրաքաղաք Երևանից՝ 175 կմ, մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 50 կմ:*
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	*Ջերմուկ համայնք 8108 մարդ,* *Ծրագիրն իրականացնող բնակավայրի /բնակավայրերի բնակչությունը՝ Ջերմուկ քաղաք՝ 6159, գյուղ Կեչուտ՝ 1088 և գյուղ Գնդեվազ 861,*
Սահմանամերձ համայնք/բնակավայր	*Ջերմուկ համայնքը և դրանում ընդգրկված բնակավայրերը սահմանամերձ չեն:*
Բարձր լեռնային համայնք /բնակավայրի	*Ջերմուկ քաղաքը և Կեչուտ գյուղն ընդգրկված է ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 756 որոշմամբ հաստատված ՀՀ բարձր լեռնային բնակավայրերի ցանկում*
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	Այո, 19.01.2006
Համայնքի և ծրագիր իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և	*Ներկայացնել համայնքի և ծրագիր իրականացվող բնակավայրի/բնակավայրերի ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրագազամատակարարման, ոռոգման, փողոցային լուսավորության վիճակի վերաբերյալ տեղեկատվություն:*

Հ/Հ	Բնակավայրը	Ջրամատակարարման տևողությունը	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը	էլեկտրամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը	գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,	ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը	լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ

1	ք. Ջերմուկ	շուրջօրյա	100/100	98	95	5	90%, ԼԵԴ լուսավորություն՝ 30%
2	գ. Կեչուտ	շուրջօրյա	100/100	95	95	20/5,7	90, ԼԵԴ լուսավորություն չկա
3	գ. Գնդեվազ	շուրջօրյա	Ջրամատակարարում 100, ջրահեռացում 90	95	90	95/40	65, ԼԵԴ լուսավորություն 30%

Ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը, - լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ

Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը

-Ջերմուկ քաղաքում մինչև օրս ՀՀ Կառավարության ֆինանսավորմամբ և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման ծրագիր, որով փոխարինվել են քաղաքի երկու թաղամասի տանիքները, սակայն բնակելի մեկ շենքի տանիք դուրս է մնացել ծրագրից: Բազմաբնակարան բնակելի շենքի պահպանման և շահագործման կանոնները պահպանելու, ինչպես նաև տանիքների նորոգման ծրագիրը ավարտին հասցնելու նպատակով անհրաժեշտ է հիմնանորոգել Մյասնիկյան փողոցի թիվ 4-րդ շենքի տանիքը: Ենթածրագրի խնդիրներն են՝ հիմնանորոգել թիթեղյա հին տանիքածածկը, ապահովել հականեխիչ և հակահրդեհային նյութերով մշակում, ապահովել օդածխատար համակարգերի ելքը տանիքից:

-Զբոսաշրջային քաղաքում, ներհամայնքային և միջքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման պայմաններում անհրաժեշտ է համապատասխան նյութատեխնիկական բազա: Կանգառի տաղավարների նորոգումը և նորերի տեղադրումը պայմանավորված է զբոսաշրջային քաղաքում պատշաճ ենթակառուցվածքներ ունենալու, համայնքում անվտանգ երթևեկության ապահովման, ուղևորների համար հարմարավետ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությամբ: Ենթածրագրի խնդիրներն են՝ Ջերմուկ համայնքում ներառված բնակավայրերում հիմնանորոգել կանգառների տաղավարները, տեղադրել նորերը, բարեկարգել շրջակա տարածքը:

-Համայնքում ընդգրկված բնակավայրերում բակային և հասարակական այլ տարածքների աստիճանների հիմնանորոգումը նպատակամղված է համայնքի բնակչության և զբոսաշրջիկների հարմարավետ և անվտանգ տեղաշարժման ապահովմանը: Ենթածրագրի խնդիրներն են՝ աստիճանների նորոգումը, թեքահարթակների կառուցումն ըստ անհրաժեշտության, բազրիքների տեղադրումը:

-Կեչուտ և Գնդեվազ գյուղերի հանդիսությունների սրահների հիմնանորոգման անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքի բնակիչների ժամանցի, ուրախության և սգո արարողությունների համար հարմարավետ և բարեկեցիկ պայմաններ ապահովելու

	կարևորությամբ: Ենթածրագրի խնդիրներն են՝ երկու շինության նորոգումը, թեքահարթակների կառուցումն ըստ անհրաժեշտության, նոր գույքի ձեռք բերումը: - Աղբամանների տեղակայման վայրերի բարեկարգման անհրաժեշտությունը պայմանավորված է մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցմամբ և չեզոքացմամբ, ինչպես նաև բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմանների ապահովմամբ: Ենթածրագրի խնդիրներն են՝ Ջերմուկ համայնքի բնակավայրերում բետոնացնել աղբամանների տեղակայման վայրերը, կառուցել աղբի տարածումը կանխող հենապատ: Ջերմուկ քաղաքի և Կեչուտ գյուղի գերեզմանատան տարածքն ընդլայնվել է, առկա ցանկապատից դուրս կան բազմաթիվ նոր գերեզմաններ, որոնց պահպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է դրանք ընդգրկել ցանկապատերի ներսում՝ կանխելով վայրի և ընտանի կենդանիների մուտքը պատմամշակութային հատուկ պահպանվող տարածք /գերեզմնատունը Կեչուտին հարակից հանդամասում է տեղակայված/: Ջրագծի կառուցումն անհրաժեշտ է գերեզմանների շինարարության իրականացման, դրանցում բույսեր և ծառեր տնկելով տարածքը բարեկարգելու համար:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	Նշված աշխատանքների կատարումը համայնքի կարևոր խնդիրներից են, որոնք, որպես ոլորտային առանձին ծրագեր, ընդգրված է Ջերմուկ համայնքի զարգացման հնգամյա ծրագրում և 2022 թվականի տարեկան աշխատանքային պլանում: Մյասնիկյան փողոցի թիվ 4-րդ շենքի տանիքի հիմնանորոգման արդյունքում կունենանք հիմնանորոգված 350 քմ մակերեսով տանիք, ավարտին կհասցվի Ջերմուկ քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների նորոգման ծրագիրը, կկանխվի շինության հետագա քայքայումը անձրևաջրից և հալոցքաջրից, կբարձրանա շինության արժեքը, բնակիչների համար կստեղծի միջոցների խնայողություն: Կանգառի տաղավարների նորոգման և նորերի տեղադրման արդյունքում Ջերմուկ քաղաքում կունենանք 5 նոր և 2 հիմնանորոգված, Կեչուտ գյուղում՝ 1 նոր և 1 հիմնանորոգված, Գնդեվազ գյուղում 1 նոր և 1 հիմնանորոգված տաղավար: Աստիճանների նորոգման արդյունքում Ջերմուկ քաղաքում կունենանք վերակառուցված 2 աստիճան՝ վերականգնված հենապատերով /10մ/, բազրիքով և թեքահարթակով՝ ըստ անհրաժեշտության, Կեչուտ գյուղում կունենանք 1 նոր աստիճան՝ 60 մետր երկարությամբ ասֆալտապատ ճեմուղով և վերականգնված 100մ հենապատով, Գնդեվազ գյուղում՝ 63մ երկարությամբ ճեմուղով, 10 մ նորոգված հենապատով 1 աստիճան: Հանդիսության սրահների մասով՝ Կեչուտ գյուղում կունենանք 300քմ մակերեսով նորոգված տանիքով, 32,5 քմ մակերեսով նորոգված խոհանոցով, նոր ջեռուցման համակարգով, նորոգված 2 սանհանգույցով /1,89քմ և 5,7քմ/, 15,04 քմ նորոգված նախամուտքով և նոր գույքով կահավորված հանդիսության սրահ: Գնդեվազ գյուղում կունենանք 9,8քմ մակերեսով նորոգված նախամուտքով, 38,5 քմ մակերեսով նորոգված խոհանոցով, նորոգված 2 սանհանգույցով /1,6քմ և 1,7քմ/ և ջրամեկուսացված նկուղով, դրենաժային համակարգ ունեցող արտաքին պատերով, նոր կոյուղագծով և ջրամատակարարմամբ հանդիսության սրահ: Աղբամանների տեղակայման վայրերի բարեկարգման արդյունքում, Ջերմուկ քաղաքի Աջափնյա թաղամասում կունենանք յուրաքանչյուրը 6քմ մակերեսով, 1,5մ բարձրությամբ հենապատով աղբի հավաքի բետոնացված 6 կետ, Ձախափնյա թաղամասում, նույն մակերեսով ու հենապատերով՝ բետոնացված 7 կետ, իսկ Կեչուտ գյուղում՝ նույն մակերեսով 7 կետ: Ջերմուկ քաղաքի և Կեչուտ գյուղի գերեզմանատան տարածքն ընդլայնվել է, առկա ցանկապատից դուրս կան բազմաթիվ նոր գերեզմաններ, որոնց պահպանությունն ապահովելու համար անհրաժեշտ է դրանք ընդգրկել ցանկապատերի ներսում՝ կանխելով վայրի և ընտանի կենդանիների մուտքը պատմամշակութային հատուկ պահպանվող տարածք /գերեզմնատունը Կեչուտին հարակից հանդամասում է տեղակայված/: Ջրագծի կառուցումն անհրաժեշտ է գերեզմանների շինարարության իրականացման, դրանցում բույսեր և ծառեր տնկելով տարածքը բարեկարգելու համար:

Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	Նախատեսվում է . -գնումներ գործընթացի կազմակերպում /շինության տեխնիկական վիճակի ուսումնասիրության, նախագծանախահաշվային փաստաթղթերի, շինարարական աշխատանքների, տեխնիկական, հեղինակային հսկողության ծառայությունների ձեռք բերում/ -արդյունքների ամփոփում, պայմանագրի կնքում, -աշխատանքների իրականացում, հանձնաժողովի կողմից արդյունքների ընդունում և վերահսկողություն: Նախատեսվում է 1. հիմնանորոգել Մյասնիկյան փող. 4-րդ բնակելի շենքի տանիքը, իրականացնելով լանջավոր տանիքի հին թիթեղյա տանիքածածկի ապամոնտաժում, վնասված փայտանյութի ապամոնտաժում, տանիքը իրականացնել օդափոխվող, ծրարաձև, բազմալանջ, նոր փայտանյութի կամ մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում, 350 քմ լանջավոր տանիքի իրականացում 0.5մմ հաստությամբ գունավոր ցինկապատ կղմինդրով, օդահան հորանների թասակների տեղադրում, հականեխիչ և հակահրդեհային նյութերով մշակում: 2. համայնքում ընդգրկված բնակավայրերում կատարել կանգառների տաղավարների հիմնանորոգում, տեղադրել նորերը, մասնավորապես՝ բազալտե սալերով երեսպատել կանգառների հատակը՝ ընդհանուր 200 քմ մակերեսով, նորոգել կանգառների տանիքները, թիթեղով կամ ապակիով փակել եզրերի բաց հատվածները, տեղադրել մետաղական հիմքով փայտե կամ մետաղական նստարաններ՝ յուրաքանչյուրում մեկական՝ կանգառի տաղավարի երկարությանը համապատասխան, փոխարինել տաղավարների մետաղական վնասված և քայքայված մասերը, ներկել մետաղական հատվածները և նստարանները, տաղավարի մուտքը հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց համար, տեղադրել համապատասխան ճանապարհային նշաններ: Հիմնանորոգման ծախսերիը նորով փոխարինելու ծախսերը գերազանցելու դեպքում՝ տաղավարները փոխարինել նորով: Նախատեսվող նոր տաղավարները պետք է լինեն մետաղական, տանիքը մեկ լանջով, դեպի հետ թեքված, տեղադրել մետաղական հիմքով փայտե կամ մետաղական նստարաններ՝ յուրաքանչյուրում մեկական՝ կանգառի տաղավարի երկարությանը համապատասխան, նորոգվող և նոր կանգառներում ապահովել էներգամատակարարում՝ գիշերային ժամերի լուսավորության համար, եզրերը նախատեսել թիթեղով փակված: տաղավարներում անհրաժեշտ է նախատեսել հայտարարության վահանակ, իսկ Ջերմուկ քաղաքում տեղադրվող տաղավարներում զբոսաշրջային քարտեզի համար առանձնացված հատված տաղավարի մուտքը հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց համար: 3. համայնքում ընդգրկված բնակավայրերում հիմնանորոգել բակային և հասարակական այլ տարածքների աստիճանները, մասնավորապես՝ վերակառուցել Ջերմուկ քաղաքի Ձախափնյա թաղամասում 2 աստիճան՝ վերականգնված հենապատերով /10մ/, բազրիքով և թեքահարթակով՝ ըստ անհրաժեշտության, Կեչուտ գյուղում կառուցել 1 նոր աստիճան՝ 60 մետր երկարությամբ ասֆալտապատ ճեմուղով և վերականգնված 100մ հենապատով՝ իրար կապելով գյուղի 8-րդ և 7-րդ փողոցները: Գնդեվազ գյուղում նախատեսվում է կառուցել գյուղից դեպի Հայրենական մեծ պատերազմի հուշակոթող և գերեզմանատուն տանող՝ 63մ երկարությամբ աստիճաններով ճեմուղի, ինչպես նաև հիմնանորոգել 10 մ հենապատը: 4. Կեչուտ գյուղի հանդիսության սրահը հիմնանորոգելիս նախատեսվում է նորոգել 300քմ մակերեսով տանիք, 32,5 քմ մակերեսով խոհանոցը, կառուցել ջեռուցման նոր համակարգ, նորոգել 2 սանհանգույցները /1,89քմ և 5,7քմ/, կոյուղին՝ անհրաժեշտության դեպքում կառուցելով նոր դիտահորեր, տաղավարի մուտքը հարմարեցնել հաշմանդամություն ունեցող անձանց համար, ըստ գործող շին. նորմերի և անհրաժեշտության՝ նախատեսել հակահրդեհային համակարգ կամ կրակմարիչներ, տաք և սառը ջրամատակարարում, էներգամատակարարում, նորոգել 15,04 քմ նախամուտքը, փոխարինել դռները, հատակը սալիկապատել և հանդիսության սրահը կահավորել նոր գույքով: Գնդեվազ գյուղի հանդիսության սրահի նորոգման ընթացքում նախատեսվում է՝ նորոգել 9,8քմ մակերեսով նախամուտքը, 38,5 քմ մակերեսով խոհանոցը, 2 սանհանգույցները

	/1,6քմ և 1,7քմ մակերեսներով/ և 20գմ երկարությամբ և մինչև հիմքերը խորությամբ ջրամեկուսացնել նկուղի արտաքին պատերը, նորոգել պոկված և թափված պատի ու հատակի սալիկները, 0.5 դյույմ խողովակով ջրագիծ տանել 2-րդ հարկ: 5. Աղբամանների տեղակայման վայրերը բարեկարգելիս նախատեսվում է՝ Ջերմուկ քաղաքի Աջափնյա թաղամասում բետոնապատել աղբի հավաքի 6 կետ յուրաքանչյուրը 6 քմ մակերեսով /1.5x4մ չափի/, կառուցել 1,5մ բարձրությամբ հենապատ /սվաղով/՝ աղբի տարածումը կանխելու համար: Նույնատիպ 7 կետ նախատեսել Ձախափնյա թաղամասում՝ ըստ անհրաժեշտության փոխելով մակերեսները, իսկ Կեչուտ գյուղում՝ 7 կետ: Նախատեսել թիթեղյա ծածկ՝ առատ տեղումներն աղբամաններ լցվելը կանխելու համար: 6. Ջերմուկի քաղաքային և Կեչուտ գյուղի գերեզմանատների բարեկարգում, մասնավորապես՝ • առկա հին, բետոնե, 380 մ երկարությամբ ցանկապատի և հենասյուների ապամոնտաժում և վերաշարում Ջերմուկի քաղաքային գերեզմանատան եզրով: 1500 մետր նոր վանդակաձև ցանկապատի կառուցում մետաղական անկյունակից և 70*70մմ չափի մետաղական ցանցից • Կեչուտի գերեզմանատանը առկա հին, մետաղական քայքայված ցանցից ցանկապատի և հենասյուների ապամոնտաժում, 1000 մետր նոր վանդակաձև ցանկապատի կառուցում մետաղական անկյունակից և 70*70մմ չափի մետաղական ցանցից: • Գերեզմանատան տարածքում ապահովել էլեկտրամատակարարում՝ գերեզմանների խնամքի, շինարարության իրականացման ընթացքում աջակցելով բնակչությանը: • կառուցել մինչև 2 կմ երկարությամբ ջրագիծ՝ գերեզմանատան ողջ երկարությամբ, տեղադրել հողի ծածկույթի տակ /ըստ բարձունքային նիշի/ և 50-70մ հեռավորության վրա, հողի մակերևույթից բարձր, տեղադրել փականներ՝ շինարարության և գերեզմանների խնամքի համար բնակչությանը ապահովելով ջրամատակարարմամբ, ջրհավաք ավազանի կառուցումն ըստ անհրաժեշտության:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	Ծրագրով կառուցվող օբյեկտների հողամասերը հանդիսանում են համայնքային սեփականություն: Նախատեսված աշխատանքների արդյունքում օբյեկտների հաշվեկշռային արժեքները կավելանան, քանի որ ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի ուղղակի շահառուները Մյասնիկյան փող.-ի 4-րդ բնակելի շենքի տանիքի նորոգման մասով շենքում բնակվող 10 բնակիչներն են, որոնք ենթածրագրի իրագործման մասով կունենան ֆինանսական միջոցների խնայողություն: Համայնքում ընդգրկված բնակավայրերում կանգառների տաղավարների հիմնանորոգում, նորերի տեղադրման ենթածրագրի շահառուները համայնքի 8108 բնակիչներն են ու տասնյակ հազարավոր զբոսաշրջիկները: Կանգառների մասով՝ բարեկարգ և հարմարավետ ենթակառուցվածքների ու պայմանների ստեղծումը կնպաստի զբոսաշրջության զարգացմանը: Համապատասխան ճանապարհային նշանների առկայությունը կնպաստի երթևեկության կանոնների պահպանմանը և անվտանգության ապահովմանը:

Համայնքում ընդգրկված բնակավայրերում բակային և հասարակական այլ տարածքների աստիճանների հիմնանորոգումը կապահովի համայնքի բնակիչների և զբոսաշրջիկների անվտանգ տեղաշարժն ու երթևեկությունը, զբոսանքի և հանգստի համար կստեղծի ավելի բարեկեցիկ պայմաններ: Կեչուտ և Գնդեվազ գյուղերի հանդիսության սրահների հիմնանորոգումը հնարավորություն կստեղծի համայնքի բնակիչների համար մատչելի պայմաններով օգտվել ժամանցի, ուրախության և սգո արարողությունների սրահի ծառայություններից: Աղբամանների տեղակայման վայրերի բարեկարգումը համայնքի տարածքում կապահովի թափառող կենդանիների կողմից աղբի տարածման կանխարգելմանը, աղբի բացասական (վտանգավոր) ներգործության նվազեցմանը և չեզոքացմանը, ինչպես նաև բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ կապահովի:

Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը

Ծրագրի իրականացման ընթացքում կստեղծվի մինչև 30 ժամանակավոր աշխատատեղ՝ աշղեկ, զոդողներ, փականագործ, ներկարար, էլեկտականության մոնտաժի մասնագետներ և բանվորներ:

Ծրագրի իրականացման արդյունքում համայնքապետարանից և մասնավոր հատվածից հիմնական աշխատատեղեր չեն նախատեսվում:

Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը

Նախորդ տարվա բյուջեն՝ 809,271,275 դրամ.

Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

	Պլանը	***Փաստացին***	***Տոկոսը***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները *այդ թվում՝*	734,986,610	827,677.64	112.61
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	587,684,792	585,511,596	99.63
- Սեփական եկամուտներ	403,903,492	401,422,296	99.39
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	147,301,815	242,166,045	164.40
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	809,271,275	701,299,229	86.66
- Վարչական բյուջեի ծախսեր	577,353,937	551,637,739	95.55
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	231,917,338	149,661,490	64.53
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, *որից՝*	231,917,338	149,661,490	64.53
- ճանապարհաշինություն	0	0	0
- ջրամատակարարում	0	0	0
- փողոցային լուսավորություն	1,918,106	441,060	22.99
- գյուղատնտեսություն	0	0	0
-նախադպ. կրթություն	3,464,367	2,982,581	86.09
-արև. ֆոտ. կայանների կառուցում	55,435,250	55,435,250	100

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

850,569,285 դրամ.

Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված

ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

	Պլանը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում *այդ թվում՝*	649,906,204
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	627,026,282
- սեփական եկամուտներ	441,057,292
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	22,879,922
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	850,569,285
- Վարչական բյուջեի ծախսեր	650,569,285
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	200,000,000
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, *որից՝*	
-քաղաքապետարանի հիմնարկի պահպանման ծախսեր	15,940,000
-գյուղական բնակավայրերի խմելու ջրի կապտաժների վերանորոգում	18,060,000
-մեքենասարքավորումների և գույքի ձեռք բերում	80,000,000
-արտաքին լուսավորության իրականացում	8,000,000
-հաս. նշան. շինությունների հիմնանորոգում	55,000,000
-այգիների հիմնանորոգում	23,000,000

Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվա բյուջեն՝ 698252100 դրամ.

Հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրով սուբվենցիոն ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարվա բյուջեն՝ 733164710 դրամ.

Ներկայացնել ծրագրի իրականացման և իրականացման տարվան հաջորդող տարվա միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված եկամուտները և ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից նախատեսված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով

	Ծրագրի իրականացման տարի	Ծրագրի իրականացման տարվան հաջորդող տարի
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտներ՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝	698252100	733164710
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	674228200	707939620
- Սեփական եկամուտներ	463110170	486265680
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	33413020	35083660

Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝	698252100	733164710
- Վարչական բյուջեի ծախսեր	674228200	707939620
- Ֆոնդային բյուջեի ծախսեր	33413020	35083660
Համայնքի ֆոնդային բյուջեի ծախսերը՝ ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, որից՝	33413020	35083660
- ճանապարհաշինություն		
- ջրամատակարարում		
- փողոցային լուսավորություն		
- գյուղատնտեսություն		
-		
Ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսված ծախսերը, ըստ հաստատված միջնաժամկետ ծախսերի ծրագրի, այդ թվում՝ */ներկայացնել սուբվենցիոն ծրագրերի համար համայնքի ֆոնդային բյուջեից նախատեսված գումարները՝ ըստ ոլորտների/*	33413020	35083660
- ճանապարհաշինություն		
- ջրամատակարարում/ջրահեռացում		
- փողոցային լուսավորություն		
- գազամատակարարում		
- նախադպրոցական հաստատություններ		
- հասարակական շենքեր		
- գույքի, տեխնիկայի ձեռքբերում		
-		

Համայնքի ծրագրի իրականացման տարվա միջնաժամակետ ծախսերի ծրագրով նախատեսված բյուջետային մուտքերի (ներառյալ՝ ֆինանսական համա-հարթեցման դոտացիայի գծով նախատեսված մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկ- ներով	Համայնքի բյուջեով նշված ծրագրի ամբողջական իրագործումն անհնար է, այս ոլորտին ուղղված համապատասխան ֆինանսական միջոցների սղության պատճառով: Համայնքի բյուջեի ֆոնդային մասում առկա և պլանավորված ելամուտների գումարը (169.5 մլն դրամ) չի բավարարում 2023 թվականին պլանավորված ծրագրերի լիարժեք իրագործմանը: 2023 թվականին նախատեսված կապիտալ ծախսերն են՝ -Ջերմուկ համայնքում հասարակական շենքերի կառուցում, վերանորոգում՝ 110 մլն դրամ, -Արփա գետի կիրճի և Ջերմուկի խորհրդանիշ եղնիկի արձան տանող ճանապարհի շրջակա ժայռերի լուսավորության իրականացում՝ 43.6 մլն դրամ, - Ջերմուկ քաղաքի փողոցների, մայթերի ասֆալտապատում՝ 174.2 մլն:

Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 2,724,000 դրամ, - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 700,000 դրամ, - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 3,000,000դրամ, - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 1,000,000 դրամ, - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ 460,000դրամ, ինժեներաերկրաբանական հետազոտության ծառայության արժեքը՝ 0 դրամ ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը 0 դրամ	***110,000,000 դրամ (100%), ըստ բնակավայրերի՝***

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	**ք. Ջերմուկ,** աշխատանքի ընդհանուր գինը, հազ. դրամ	**գ. Կեչուտ,** աշխատանքի ընդհանուր գինը, հազ. դրամ	**գ. Գնդեվազ,** աշխատանքի ընդհանուր գինը, հազ. դրամ
1	ք. Ջերմուկ, Մյասնիկյան փող. 4-րդ շենքի տանիքի հիմնանորոգում	10,000	0	0
2	կանգառների տաղավարների հիմնանորոգում, նորերի տեղադրում	6,000	3,000	1,000
3	բակային և հասարակական այլ տարածքների աստիճանների հիմնանորոգում	4,000	4,000	7,000
4	հանդիսության սրահների հիմնանորոգում	0	20,000	15,000
5	աղբամանների տեղակայման վայրերի բարեկարգում	11,000	4,000	0
6	գերեզմանատան բարեկարգում	15,000	10,000	0
	Ընդամենը	46,000	41,000	23,000

Մինչև ընթացիկ տարվա վերջ չավարտվող ծրագրերի դեպքում՝ հստակ առանձնացնել ընթացիկ տարվա ընթացքում նախատեսվող աշխատանքներն ու ծախսերը և հաջորդ տարվա աշխատանքներն ու ծախսերը:

Նախատեսում ենք ծրագիրն ավարտել 2023 թվականի ընթացքում:

Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	**55,000,000 դրամ (50%)**

Այլ ներդրողներ	Այլ ներդրողներ չկան:
Ծրագրի իրականացման տևողությունը	Սկիզբը՝ 01.05.2023թ. Տևողությունը 5 ամիս
Ծրագրի ծախսերը	*Նախագծանախահաշվային փաստաթղթերը գտնվում են մշակման փուլում, որից հետո կհստակեցվի ծրագրի արժեքը:*
Ամսաթիվ	*08 հուլիսի 2022 թ.*

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու՝ Ստեփանոս Վարդանյան
Հեռ.՝ 077.57.75.60, էլ.փոստ՝ Vardanyan.Stepan@mail.ru

Համայնքի ղեկավար **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**
(անունը, ազգանունը)

Կ. Տ